«Ֆասթ Բանկ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6
(+374 10) 51 00 00

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴԻՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

—.—.—թ.

Կնքված «Ֆասթ Բանկ» ՓԲԸ բանկային և ավանդային հաշիվների բացման և վարման (սպասարկման) ընդհանուր կանոնների (այսուհետ՝ «Կանոններ») և ժամկետային ավանդի տեղեկատվական ամփոփագրի շրջանակներում (այսուհետ՝ «Տեղեկատվական ամփոփագիր»՝ Պայմանագրին կից Հավելված 1)

«Ֆասթ Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «Բանկ»), ի դեմս գործադիր տնօրեն-տնօրինության նախագահ————, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից և, քաղաքացի ———— /անձը հաստատող փաստաթղթի սերիա/համար՝ ———, տրված՝——-ի կողմից, ————թ.-ին, վավերական է մինչև ————թ.-ը/ այսուհետ «Ավանդատու»), մյուս կողմից, միասին անվանվելով Կողմեր, իսկ առանձին նաև՝ Կողմ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ «Պայմանագիր») հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Բանկը, ընդունելով Ավանդատուից ստացված դրամական միջոցները, այսուհետ՝ «Ավանդ», պարտավորվում է վերադարձնել Ավանդի գումարը և սույն Պայմանագրով նախատեսված պայմաններով և կարգով տոկոսներ վճարել դրանից:

1.2. Պայմանագրի, Տեղեկատվական ամփոփագրի և Կանոնների հիման վրա Ավանդատուից որպես Ավանդ ստացված դրամական միջոցները հաշվառելու համար Բանկը Ավանդատուի համար բացում է ավանդային հաշիվ:
1.3. Ավանդատուն Բանկում ներդնում է ժամկետային ավանդ հետևյալ պայմաններով՝

Ավանդի ներդրման ամսաթիվ	
Ավանդային հաշվի համար	
Ավանդի ժամկետ	
Ավանդի գումար և արժույթ	
Ավանդի տարեկան տոկոսադրույք	
Ավանդի տոկոսային եկամտաբերություն	
Ավանդի վերադարձման ամսաթիվ	
Ավանդի տոկոսների վճարման եղանակ	
Ավանդի տոկոսների վճարման արժույթ	
Բանկային հաշիվ, որին փոխանցվելու է հաշվեգրված տոկոսները	
Քաղվածքի ստացման եղանակ և կոնտակտային տվյալներ	
Եղանակ	
Կոնտակտային տվյալ	
Բանկի հետ հաղորդակցման եղանակ և կոնտակտային տվյալներ	
Եղանակ	
Կոնտակտային տվյալ	

1.4. Ավանդը համալրումներով է և առանց ելքագրումների:
1.5. Ավանդի նկատմամբ կիրառվում են Ավանդն ընդունելու պահին գործող Բանկի Կանոնները և Բանկի կողմից սահմանված Տեղեկատվական ամփոփագրի դրույթները:
1.6. Ավանդատուն հանձնարարում է ավանդի ժամկետի ավարտին կամ ժամկետից շուտ Ավանդի գումարը պահանջելու դեպքում Ավանդի գումարը փոխանցել Բանկում իր անունով բացված հետևյալ բանկային հաշվեհամարին՝ ———————— :

2. Հայտարարություն և Համաձայնություն

2.1. Սույն Պայմանագրի ստորագրումով Ավանդատուն հաստատում և հավաստում է, որ ծանոթացել է Բանկի Կանոններին և Տեղեկատվական ամփոփագրի դրույթներին և համաձայն է դրանց հետ: Սույն Պայմանագրի ստորագրումով Ավանդատուն հաստատում և հավաստում է, որ մինչև ավանդային պայմանագրի կնքումը ստացել է Տեղեկատվական ամփոփագրի օրինակը:
2.2. Համաձայն է, որ Պայմանագիրը, Կանոնները և Ժամկետային ավանդի Տեղեկատվական ամփոփագիրը միասին կազմում են ֆիզիկական անձի ժամկետային ավանդի պայմանագիր կնքված Ավանդատուի և Բանկի միջև, որը կազմված և ստորագրված է կողմերի կողմից որոշված եղանակով: Համաձայն է, որ Կանոնները Բանկի կողմից կարող են միակողմանի փոփոխվել՝ օրենքով սահմանված կարգով:
2.3. Ավանդատուն հայտարարում և հավաստում է, որ Պայմանագրի կնքման պահի դրությամբ որպես Ավանդ ներդրվող գումարը հանդիսանում է իր սեփականությունը և ծանրաբեռնված չէ երրորդ անձանց հանդեպ որևէ պարտավորություններով և ազատ է նրանց իրավունքներից, վեճի առարկա չէ, արգելանքի և կալանքի տակ չի գտնվում, օրենքով նախատեսված սահմանափակումներ գրանցված չկան, նվիրված չէ, գրավ չի դրվել, որևէ անձի չի խոստացվել նվիրվել:
2.4. Բանկը օրենքով և սույն Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով գրավոր ծանուցում է Ավանդատուին Պայմանագրի փոփոխությունների մասին համաձայն պայմանագրին կից տեղեկատվական ամփոփագրի դրույթների
2.5. Ստորագրելով սույն Պայմանագիրը՝ հաստատում եմ, որ Բանկի կողմից բանավոր կերպով ծանոթացել եմ ՀՀ օրենսդրության համաձայն նախքան պայմանագրի կնքումը պարտադիր ներկայացվող տեղեկատվությանը:

Պայմանագիրը երկկողմանի ստորագրվելուց հետո ուղարկվելու է հաճախորդի էլ. փոստի հասցեին:

Ավանդատուի և Բանկի ներկայացուցչի կողմից ստորագրվում է ձեռագիր, թվային կամ ձեռագիր ստորագրության փոխակերպման միջոցով:

3. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՁՄԱՆՆԵՐԸ

«ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԲԸ

Ստորագրություն

Ավանդատու՝

✓

Ստորագրություն